

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 22-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Օշականում, Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, օրհնությամբ և աղոթքով, բարեհաճում է մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն շնորհել հոգեշնորհ Տ. Լևոն աբեղա Աբելյանին, հոգեշնորհ Տ. Տարոն աբեղա Ճերեճյանին և հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանին։

Ժամը 10-ին արդեն Օշականում են Մայր Աթոռի միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը։

Այնտեղ են եկել նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող մեր հյուրերը՝ Ա. Ճիզմեճյանը և Վ. Կարապետյանը Փարիզից, Հայաստան Վարդանյանը Լոնդոնից, բժիշկ Եղվարդ Դյուդյուկճյանը Բուխարեստից։

Ժամը 11-ին ժամանում է Վեհափառ Հայրապետը և եկեղեցու զանգերի ղողանջի տակ հանդիսավորապես մուտք է գործում եկեղեցի ու Ս. Մեսրոպի շիրմի վրա մի պահ աղոթելուց և հսկելուց հետո, բարձրանում է եկեղեցի։ Սկսվում է «Կանոն մասնաւոր իշխանութեան» տվչության կարգի արարողությունը։ Խարտավիլակի պաշտոնը կատարում է Տ. Կոմիտաս եպիսկոպոսը։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, շարականների, աղոթքների, սուրբգրական ընթերցումների համապատասխան կատարմամբ, աստիճան առ աստիճան շնորհում է «աշակերտացն ճշմարիտ բանին քարոզութիւն զմասնաւորն իշխանութիւն, որ է չորս աստիճան, ... յօրինեալ Սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ ճշմարտութեան վարդապետի գերահանճար հռետորի և անյաղթ ախոյենի սուրբ հաւատոյ»։

Մեր եկեղեցում «մասնաւոր վարդապետական գաւազան տալոյ» կարգը շատ գեղեցիկ և իմաստալից մի արարողություն է, որը միաժամանակ թեկնածուների իմացական և հոգեկան աճի և պատրաստության վկայությունն է, որով նրանք իրավունք են ստանում շնորհաբաշխությամբ «քարոզելոյ զԲանն կենաց ուղղամիտ քարոզութեամբ, յունկն հաւատացելոց», «ուսուցանելոյ զտգէտս և խրատելոյ զստահակս», պահելու «զպատուէր օրինագրութեանց հարցն սրբոց՝ ողջամիտ վարդապետութեամբ, ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ»։

Իսկ ո՞րքա՞ն թելադրական է և պարտավորեցնող, երբ այդ իշխանությունը թեկնածուն ստանում է Օշականում, Ս. Մեսրոպի շիրմի մոտ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սուրբ օրհնությամբ։

Արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը խոսում է գեղեցիկ մի խրատական և շնորհավորում Իր հոգևոր զավակների աստիճանի բարձրացումը, մաղթելով նրանց լինել «մշակք առանց ամօթոյ»։

Նորընծա վարդապետները աջահամբույրով իրենց որդիական երախտագիտությունն են հայտնում իրենց Հոգևոր Հոր՝ Հայոց Վեհափառ Հայրապետին, և իջնելով Ս. Մեսրոպի դամբարանը, վերակրկնում են իրենց սրբազան ուխտը՝ աննահանջ սիրով և անպայմանավոր հնազանդությամբ ծառայելու։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, Մայր Աթոռին և հայ ժողովրդին։

Ժամը 2-ին, Օշականի ուխտավորները վերադառնում են մայրավանք։

**
*

Նորընծա Տ. Լևոն վարդապետ Աբելյանը ծնվել է 1935 թվականին Բեյրութում, նախնական կրթությունն ստացել է Յաֆայի հայոց Ս. Գլխադրի վարժարանում, որի ընթացքն ավարտելուց հետո, 1951 թվականին, ընդունվել է Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարանը։

1955 թվականին սարկավագ է ձեռնադրվել և 1957 թվականին կուսակրոն քահանա։

1957—1960 թվականներին Ս. Աթոռում պաշտոնավարել է որպես գավազանակիր, ժառանգավորաց վարժարանի փոխ-տեսուչ և ուսուցիչ, և ապա Ս. Հարության Տաճարի տեսուչ։

1960—1964 թվականներին Անգլիայում, Դուրհեյմի համալսարանում, սովորել է աստվածաբանություն։

Այժմ սովորում է Փարիզում և պաշտոնավարում է միաժամանակ Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում։

**
*

Հոգեշնորհ Տ. Տարոն վարդապետ Ճերեճյանը ծնվել է 1937 թվականին Բեյրութում։ 1951 թվականին Սահակյան վարժարանը ավարտելուց հետո, ընդունվում է Անթիլիասի դպրեվանքը, ուր սովորում է 1952—1956 տարիներին։

1956 թվականին ընդունվում է Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանը և լսարանական բաժինն ավարտում է 1961 թվականին։ Սարկավագ է ձեռնադրվում Մայր Աթոռում 1958 թվականին։

1961—1962 թվականներին սովորում է Լոնդոնում, Կելամ անգլիական վանքում, իսկ 1962—1963 թվականներին՝ Կինգզ կոլեջում։

1963 թվականի դեկտեմբերի 8-ին, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, կուսակրոն քահանա է ձեռնադրվում Տ. Սերովբե արքեպիսկոպոսի ձեռքով։

Տարոն վարդապետն այժմ պաշտոնավարում է Փարիզի հայոց եկեղեցում։

**
*

Հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը ծնվել է Բուխարեստում 1938 թվականին։

Ծնողների հետ հայրենադարձվել է 1948 թվականին և սովորել է Երևանի համար 58 միջնակարգ դպրոցում։

1956 թվականին ընդունվել է Հոգևոր Ճեմարան և 1962 թվականին ավարտելով լսարանական բաժինը և պաշտպանելով իր դիպլոմային աշխատանքը՝ «Գրիգոր Նարեկացին որպես «մատենագիր», սարկավագ է ձեռնադրվել և 1964 թվականին՝ կուսակրոն քահանա։

Հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետն այժմ Մայր Աթոռի եկեղեցական թանգարանի վարիչն է։ Նրա վարդապետական ավարտաճառի նյութը, որի վրա աշխատում է, «Գործք առաքելոց»-ն է։

**
*

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծա վարդապետներին, մաղթելով նրանց հաջողություն և բեղմնավոր գործունեություն։